

Կաթոլիկ եկեղեցուց ծագած բողոքական ուղղություններն ու հարանվանությունները

Armenian Church Library
<http://hygradaran.weebly.com>

Այսպիսով, բողոքականությունը XVIդ., «Ռեֆորմացիայի» հետևանքով ու դրա ընթացքում, Կաթոլիկ եկեղեցուց հեռացած ուղղություն է, որը միավորում է տարբեր ուղղությունների պատկանող բազմաթիվ ինքնուրույն հարանվանություններ:

Բողոքականությունը կարելի է ժամանակային առումով բաժանել երկու խմբի՝ վաղբողոքական և ուշբողոքական: Վաղբողոքական եկեղեցիներն էին յուսերականը, կալվինականը և անգլիկանը, այնուհետև առաջացան նաև այլոք՝ մեր օրերում արդեն կազմելով մոտ 2 հազարի հասնող ինքնուրույն և գործնականում միմյանց հետ կապ չունեցող միավորների հավաքականություն, որոնք, ըստ 2004թ. տվյալների, ունեն մոտ 500 միլիոն հետևորդ:

Վերածննդի շարժումը

XIII դ. ի հայտ է գալիս «Վերածնունդ» (Ռենեսանս) տերմինը¹, որը խորհրդանշում է անտիկ աշխարհի (կռապաշտության)՝ աշխարհիկ բնության, բացառապես փորձին հենվող գիտության, առավելապես էթիկային (բարոյականությանը) սևեռվող հումանիզմի վերածնունդը: Այն ժամանակվա մտավորական խավը համարում էր, որ տեղի է ունենում անտիկ աշխարհի (պետք է հասկանալ կռապաշտության) վերածնունդ: Հին Աշխարհի մշակույթի մեջ նրանց գրավում էր բնությունը: Հումանիզմը (որը թարգմանվում է մարդակենտրոնություն, մարդապաշտություն) Վերածննդի շրջանի մշակույթի գաղափարական բովանդակությունն էր, որը հսկայական ազդեցություն թողեց ժամանակի հոգևոր որոնումների ընթացքի վրա: Հումանիստները ստեղծեցին կյանքի բարիքներին անհագորեն ձգտող մարդու իդեալը: Այն կապող օղակն էր անտիկ շրջանի ու Վերածննդի (Ռենեսանսի) շրջանի: Հումանիզմի² կարևոր գծերից է Ինդիվիդուալիզմը՝ անհատապաշտությունը (որը հետագայում պետք է դառնար անհատական իրավունքի գաղափարական հիմքը): Ըստ այսմ, «մարդը տիեզերքի կենտրոնն է» (Ֆիչինո), «մարդն ինքն է կերտում իր կերպարը...» (Միրանդոլլա): Ի հակադրումն եկեղեցու, Վերածնունդը փառաբանում է մարդու մեծությունը, նրա բանական հզորությունը, նրա կատարելագործման ունակությունը (սա մարդկության վերադարձ էր, ինչպես Կողբացին է բնութագրում, իր երիտասարդական դիվական շրջան-վիճակին): Վերածննդի բարոյական նորմն է դառնում բարեգործությունը, բայց լիովին այլ իմաստով, քան եկեղեցին է քարոզում՝ դա ավելի շատ նման է անհատական հատկանիշների ցուցադրման: Հումանիզմի հետաքրքրության սևեռակետը դառնում է լոկ էթիկան: Եթե միջին դարերի արվեստի հիմնական միջոցը փոխաբերությունը և սիմվոլիկան էր, ապա Վերածննդի արվեստը ձգտում էր ռեալիզմին: XVI-

¹ XIV-XVI դարերում Իտալիայում, XV-XVI դարերում՝ այլ երկրներում:

² Հումանիզմը ծնունդ տվեց XVIIդ. փիլիսոփա-լուսավորիչներին: Հումանիզմի հիմնադիրներն էին Դանթեն, Պետրարկան, Բոկաչոն, Լորենցո Վալան, Միչել դե Մոնտենը, Թոմաս Մորը ևն:

XVIIդդ. գաղափարախոսության բնութագրիչ էմպիրիզմն ու ռացիոնալիզմը դրսևորվեցին նաև հասարակական և պետական հարաբերությունների ոլորտում, որտեղ **ընդգծվում էր պետության աշխարհիկ և ոչ թե աստվածային բնույթը**: Հունանիզմին օրինաչափորեն հետևեց «**Ռեֆորմացիան**», որն իշխող էր արդեն XVI դարից:

Վաղբողոքական շարժումներ

Անգլիացի մտածողներ Դուևս Սմիթը (1270-1308թթ.) և Վիլյամ Օքամը (1300-1349թթ.) համարում էին. «Հավատը և բանականությունը կապված չեն միմյանց հետ...»: Սրա հետագա զարգացումը բերեց փիլիսոփայական ու կրոնական եզրակացությունների տարբերակմանը: Ըստ մատերիալիզմի հիմնադիր Ֆ. Բեկոնի (XVIդ.), **աստվածաբանությունը առնչվում է ոչ թե բանականությանը, այլ՝ եկեղեցուն, և պահանջում է բանականությունը մաքրել ուրվականներից ու կուռքերից**: Սկիզբ առավ սույն խնդիրը լուծող մի հսկայական շարժում՝ բողոքականությունը, որը պատերազմներ ու հեղափոխություններ բերեց՝ միանգամայն փոխելով աշխարհակարգը: Ի հայտ եկավ ճշմարտության երկվությունը:

Կատարներ (մաքուրներ)

XIIդ. սկզբներին Հռենոսի շրջակայքում և Պիրիենյան թերակղզում ի հայտ է գալիս **Կատարների աղանդը**: Կատարները քարոզում էին, որ աշխարհում պայքարում են երկու «ամենագոր» ուժեր՝ աստված, որ ստեղծել է բոլոր հոգևորներին և սատանան, որ ստեղծել է նյութական աշխարհը (սա փոստորեն երկվության սաղմնավորումն է թրիստոնեական շրջանում): Այստեղից էլ, իրենք հրաժարվում են աշխարհից և ձգտում սպանել մարմինը: Նմանապես կա երկու եկեղեցի՝ Կատարներինը և սատանայինը՝ Կաթոլիկը: Սրանց շատ նման է 1173թ. լիոնյան առևտրական **Պետրոս Վալդի շարժումը**: XIII դ. վաղեմանների համայնքը լայնորեն տարածվեց Ֆրանսիայում և հյուսիսային Իտալիայում:

Վալդենսներ

1173թ. Ֆրանսիայի ճորտ գյուղացիության ու արհեստավորների միջավայրում ի հայտ է գալիս **Վալդենսների աղանդը**, որի հիմնադիրը առևտրական Պյեռ Վալդն էր և որը հրաժարվում էր մասնավոր սեփականությունից ու մերժում Կաթոլիկ եկեղեցու սեփականություն ունենալու և տասնորդ հավաքելու իրավունքը: Մերժում էին քահանայական դասը, խորհուրդները, սրբապատկերների ու խաչի հարգությունը, կոչ անելով վերականգնել նախնական քրիստոնեության սկզբունքները: Սրանց առաջ քաշած բազմաթիվ գաղափարներ իրականություն դարձան «Ռեֆորմացիայի» շրջանում: Նրանց ուսմունքը դատապարտվել է IV Լաթերանյան ժողովում (1215թ.): Սիքստ IV Պապը 15դ. նրանց դեմ խաչակրաց պատերազմ ձեռնարկեց:

Armenian Church Library
<http://hygradaran.weebly.com>

Ֆլագելանտներ

Ֆլագելանտները (լատիներեն “flagelum” - մտրակ, խարազան) խարազանվող կրոնական եղբայրություն էր, որը ի հայտ է եկել Իտալիայում 1210թ.: Դրանք քաղաքային աղքատների միջավայրից էին և քաղաքից քաղաք գնալով՝ հայտնում էին աշխարհի վերջի մասին: Նրանք հանդես էին գալիս ինդուլգենցիայի, սրբերի հարգանքի դեմ: Ի նշան զղջումի ինքնախարազանվում էին և «արյան մկրտությամբ» իբր քավում մեղքերը: XIVդ. նրանց կարելի էր տեսնել Ֆրանսիայում, Լեհաստանում, Էլզասում, Լոթարինգիայում, Շվաբիում, Դանիայում: 1349թ. Ֆլագելանտները եկեղեցու կողմից դատապարտվեցին որպես հերետիկոսներ: Վերածվելով ինքնամոլոխի աղանդի, նրանք աստիճանաբար վերացան:

«Լոլլարդներ»

Լոլլարդները (անգլերեն “lollard” մրթմրթացող, լուռ աղոթող) XIV-XVդդ. Անգլիայի հակակաթոլիկ հերետիկոսության հետևորդներ էին: **«Լոլլարդների» շարժումը** ծնունդ էր առել ժողովրդի «ստորին շերտի» սոցիալական անբավարարվածությունից և քարոզում էր մարդկանց սոցիալական հավասարություն: Ջ. Ուիկլիֆին հետևելով, լոլլարդները պահանջում էին կաթոլիկ եկեղեցու արտոնությունների, տասանորդի և հարկերի վերացում, եկեղեցու ունեցվածքի օտարում: XVդ. նրանց միջավայրում ի հայտ եկան երկու ուղղություններ. բյուրգերյան կամ ուիկլիֆյան, որն իր ծրագիրը սահմանափակում էր եկեղեցու բարեփոխմամբ ու եկեղեցական ունեցվածքի օտարմամբ, և գյուղացիապլեբեյական, որն այս ծրագրին ավելացնում էր նաև ունեցվածքի ընդհանրականության գաղափարը: Այն Ուոթ Թեյլորի (1381թ.) գյուղացիական ապստամբության, անգլիական Ռեֆորմացիայի նախապատրաստողի դեր խաղաց:

XIVդ. հայտնվում են **ոգեպաշտները (սպիրիտուալները)**, որոնք փառաբանում են աղքատությունը:

«Ցվիկաուսյան մարգարեներ»

«Ցվիկաուսյան մարգարեների» շարժման հիմնադիրը Նիկողայոս Շտորիոմն է, ըստ որի, մկրտությունն իրական է, եթե այն կատարվում է հասուն տարիքում և հարկ է վերակմկրտել անչափահաս շրջանում մկրտվածներին: Այս իսկ պատճառով նրանք կոչվեցին **«անբապտիստներ»**: Նրանք քարոզում էին վերադարձ դեպի քրիստոնեական նախնական մաքրությանը (Ավետարանին), համարում էին, որ դեռ կենդանի է մարգարեության խոսքը, և սրանցով **«հակադրվում էին հայրերի ավանդին»**:

1414թ. Լատին եկեղեցուն ծագեց **«ժողովական շարժումը»**, 1545-1563թթ. գունարվեց Տրիդենտյան եկեղեցական ժողովը՝ հերետիկոս հռչակելով բոլոր բողոքականներին...

Լյութերականություն

Բողոքականության խոշորագույն ուղղությունն է, որ հիմնադրվել է Գերմանիայում, Մարտին Լյութերի կողմից **XVI**դ.: Նրա ուսմունքում ձևակերպված են բողոքականության գլխավոր դրույթները, սակայն լյութերականությունը դրանք կյանքի կոչեց նվազ հետևողականությամբ, քան կալվինիզմը:

Իրենց հավատքի ուսմունքի հիմնական գրքերի թվին է պատկանում Մելանխթոնի շարադրած «Աուգսբուրգյան դավանանքը», «Աուգսբուրգյան դավանության ջատագովությունները» և Մ. Լյութերի համառոտ հարցուպատասխանը (կատեխիզիսը): Բացի այս լյութերականների գրականության մաս են կազմում «Շնալկալդենյան հողվածները», լյութերական «Փոքր կատեխիզիսը» և «Մեծ կատեխիզիսը», ինչպես նաև «Համաձայնության բանաձևը»: Լյութերականությունը հավատքը հասկանում է որպես մարդու անմիջական կապ Աստծո հետ, որտեղից էլ «հավատքով արդարանալու» ուսմունքը՝ ի հակադրություն կաթոլիկ եկեղեցու, գործերով արդարանալու, եկեղեցու ու շնորհի վերաբերյալ ուսմունքին: Նրանք որպես հավատքի միակ աղբյուր են ընդունում Սուրբ գիրքը՝ մերժելով Սրբազան ավանդությունը: Մերժում են վանականությունն ու կուսակրոնությունը, քանի որ, ըստ նրանց, ոչ թե աշխարհից փախչելով, այլ աշխարհում կատարած իր գործունեությամբ մարդը պետք է որոնի փրկության և Աստծուն ծառայելու ուղիները: Ելնելով «երկու թագավորությունների մասին» իրենց ուսմունքից, ընդունում են պետության ինքնուրույնությունը եկեղեցուց, որը կախման մեջ է գտնվում աշխարհիկ իշխանություններից: Լյութերի մահից հետո լյութերականության վրա մեծ ազդեցություն թողեց XVII-XVIIIդդ. «**լյութերական ուղղափառությունը**» և **պիետիզմը**: XIXդ. ֆրանսիական հեղափոխության պարտությունից հետո լյութերական աստվածաբանության մեջ ձևավորվում են պահպանողական և ազատական ուղղություններ՝ ընդդիմանալով Լուսավորությանը:

Լյութերական եկեղեցին հաճախ կոչում են նաև Ավետարանական: Ավետարանական են կոչվում նաև տարբեր բողոքական եկեղեցիների միավորումները, որոնցում գլխավոր դեր է խաղում լյութերականությունը:

Պահպանված է **մեսսան** (կաթոլիկների պատարագը), խորհուրդներից՝ **մկրտությունը** և **հաղորդությունը**, **եկեղեցական պսակը**, **քահանայի ձեռնադրությունը**, **խոստովանությունը**, **կոնֆիրմացիան** (դրոշմը, որ խորհրդանշում է երիտասարդների եկեղեցական չափահասությունը): Այս ամենը նրանց մոտ լոկ տուրք է ավանդությանը, այլ ոչ թե՛ խորհուրդ: Տաճարի ներսում չկան սրբապատկերներ, բայց կա խաչելությունը, սուրբ սեղանը. քահանաներն ունեն հատուկ հագուստ: Երաժշտական խիստ կանոն չունեն, կան (նաև բոլոր բողոքականների մոտ) ռոք ոճի ստեղծագործություններ (ամենահայտնին՝ «Հիսուս Քրիստոս՝ գերաստղ» ռոք-օպերան է):

Աշխարհում գոյություն ունի 192 լյութերական եկեղեցիներ, որոնք ինքնուրույն են գործում, քանի որ չունեն կենտրոնական ղեկավարություն: Նրանցից 59-ը (50 մլն. հետևորդ), ազգային եկեղեցիներն են, որոնք 1947թ. միավորվել են Համաաշխարհային Լյութերական Դաշնության (ՋԼԴ) մեջ: ՋԼԴ-ի կենտրոնատեղին գտնվում է Շվեդիայում: **Ավետարանական-**

յուրթերական եկեղեցիները ևս մտնում են ՀԼԴ-ի մեջ: Լյութերականների մոտ կեսն ապրում է Գերմանիայում, մոտավորապես 15մլն.՝ Սկանդինավյան երկրներում, մոտ 7մլն.՝ ԱՄՆ-ում: Նրա հետևորդների թիվը հասնում է մոտ 75 միլիոնի (քրիստոնյաների մոտ 10%-ը):

Համաշխարհային Լյութերական դաշինք (ՀԼԴ) - Լյութերական եկեղեցիների միջազգային կազմակերպություն՝ ստեղծված 1947թ. շվեդական Լունդ քաղաքում: Միավորում է 59 յուրթերական եկեղեցիներ և ունի մոտ 50 միլիոն հետևորդներ: Կենտրոնակայանը ժնևում է: Ժողովներ գումարում է վեց տարին մեկ: Առաջնորդվում է սեփական Սահմանադրությամբ, որի 2-րդ հոդվածի համաձայն Սուրբ գիրքը համարվում է եկեղեցական ուսմունքի և գործունեության միակ աղբյուր և նորմա: Նրա առաքելությունն է յուրթերական եկեղեցիների հետևորդների միավորումը, Քրիստոսի «ճշմարիտ» ուսմունքի քարոզչությունը, յուրթերական եկեղեցիներին աջակցելը: Թողարկում է «Լյութերական աշխարհ» ամսագիրը: Համաշխարհային խնդիրների շուրջ նրա տեսակետը հիմնականում հանդնկնում է եկեղեցիների համաշխարհային խորհրդի դիրքորոշմանը:

Դանիական ժողովրդական եկեղեցի (ԴԺԿ) - Ավետարանական-լյութերական այս եկեղեցին Դանիայի առաջատար և առավել ազդեցիկ կրոնական կազմակերպությունն է, որն ունի պետական կարգավիճակ: Քրիստոնեությունը Դանիա է թափանցել IXդ. սկզբին, և պաշտոնական կրոն է հայտարարվել 960թ.: Ռեֆորմացիան Դանիայում կապված է Քրիստիան III թագավորի անվան հետ, որը յուրթերականությունը դարձրեց երկրի պետական կրոնը: ԴԺԿ-ի կարգավիճակն ու գործունեության հիմունքները սահմանվում են երկրի սահմանադրությամբ: Եկեղեցու պաշտոնական գլուխը թագավորն է: **Վարչականորեն նա ղեկավարն է եկեղեցու գործերի նախարարության:** Նրա հետևորդ են հանդիսանում երկրի բնակչության 95%-ն են կազմում: Հոգևոր սպասավորների պատրաստումն իրականացնում են Կոպենհագենյան և Օրխուսյան համալսարանների աստվածաբանական ֆակուլտետները: Քահանան պետական ծառայող է համարվում և պաշտոնի է նշանակվում կառավարության կողմից՝ համայնքի խորհրդի համաձայնությամբ: Կոպենհագենի եպիսկոպոսը համարվում է հավասարների մեջ առաջինը: 1947թ. կանանց իրավունք վերապահվեց քահանայագործելու: 50-ականներից բանակում մտցվեց կապելլաների ծառայությունը: Պաշտամունքներին կանոնավորապես մասնակցում են բնակչության 3%-ը, սակայն 70-90%-ը մասնակցում է այնպիսի կրոնական ծեսերի, ինչպիսիք են մկրտությունը, հաղորդությունը, պսակը և հոգեհանգիստը:

Նրա հետևորդների թիվը հասնում է մոտ 75 միլիոնի (քրիստոնյաների մոտ 10%-ը):

Մյունցերականություն

1521թ. Լյութերից առաջ անցավ նրա երբեմնի կողմնակից քահանա **Թոմաս Մյունցերը:** 1520թ. կապերը խզում է չափավոր դիրք գրաված Լյութերի հետ և մերձենում հեղափոխական գյուղացիությանն ու քաղաքային պլեբսին՝ ձգտելով նրանց զաղափարախոսությունն արտահայտել կրոնամիստիկական տեսքով: Նա գերմանական ժողովրդական «Ռեֆորմացիայի» գաղափարախոսն էր և 1524-1529թթ. Գերմանիայում

գյուղացիական արյունալի պատերազմի առաջնորդը: Մյուսները Բարեփոխումը դիտում էր որպես աղքատների ու տնանկների պաշտպանությանն ուղղված համընդհանուր սոցիալական արդարության պայքար: Բարեփոխականների մեծամասնությունը դատապարտում էր արյունահեղությունը և նրա գաղափարների արմատականությունը: Իր ժամանակի Կաթոլիկ եկեղեցու ինքնահավան քահանաներին՝ «փարիսեցիներին, եպիսկոպոսներին և դպիրներին» նա հակադրում էր «սրտի անմիջական հավատը», հավատի միակ մաքուր աղբյուր էր համարում **«կենդանի հայտնությունը»**, այլ ոչ թե սուրբ գրքերը: Եռթյամբ նա պրագմատ էր և, ըստ նրա, հավատը ոչ թե պասիվ խոկումն է, այլ՝ ակտիվ գործելը: Հույսի փոխարեն առաջարկում էր հավատ, որը հանդիսանում է **արդար հասարակական կառույցի նախապայմանն է**: Բարձրագույն չափանիշ է համարում Ս. Հոգին՝ ավելացնելով՝ որը գործում է մարդկային հոգում: Այն համարում է «մարդու համար ճշմարտության մաքրագույն և ամենաամանիջական աղբյուր» (որով սակայն անուղղակիորեն բարձրացնում է մարդու անհատական հասկացությունը, ընկալումը (հիմք տալիս բազմակարծության)՝ փոխարեն Հնավանդ եկեղեցու առաջարկած Ընդհանրականության):

Ցվինգլիականություն

Շվեյցարիայում «Ռեֆորմացիայի» առաջնորդ դարձավ աստվածաբան և քահանա **Ուլրիխ Ցվինգլին** (1484-1531թթ.)՝ հիմնելով իր ուղղությունը՝ ցվինգլիականությունը: Ուսմունքի հիմքում ընկած է Քրիստոսի կողմից սկզբնական մեղքի քավումն ու հավատքի միջոցով աստվածային շնորհով մարդուն տրվող փրկությունը: Լյութերի նման նա էլ ուսուցանում է **միայն փոքրաթիվ ընտրյալների փրկության մասին**: Ցվինգլիի համար ճշմարտացի էր այն, ինչը հաստատվում էր Գրքերով, այն դեպքում, երբ Լյութերի համար ճշմարտացի էր միայն այն, ինչը չէր հակասում իրեն: **Ցվինգլիականությունը՝ մայրցամաքային բողոքականության** մեկ այլ հոսանքը, մերժում էր խորհրդի մեջ Քրիստոսի իրական ներկայությունը՝ ողջ արարողությանը լոկ Քրիստոսի զոհաբերության հիշատակման սիմվոլիկ բնույթ վերագրելով: Ցվինգլիականությունը բյուրգերյան ռեֆորմացիայի առավել արմատական ուղղություններից է: 1522թ. Ցվինգլին արմատապես բարեփոխեց Ցյուրիժոի կաթոլիկ եկեղեցին. փակվեցին վանքերը, ինդուլգենցիայի վաճառքն արգելվեց, տաճարից հանվեցին սրբապատկերները, խաչերը, արձանները, մասունքները, Ս. սեղանները, օրգանները, զանգերը, որոնք ըստ նրա խանգարում են ինքնախորասուզմանը: Խորհուրդները, փաստորեն, մերժվում էին, դրանք միայն նշաններ էին նրա համար: Հաղորդության ժամանակ շնորհատվություն տեղի չի ունենում, և, ըստ նրա, այս արարողությունը լոկ Քրիստոսի զոհաբերման հիշողություն է: 1523թ. հրատարակեց իր «67 թեզեր»-ը: Նույն տարում Ցյուրիխի քաղաքային խորհուրդը, որի անդամ էր և Ցվինգլին, պաշտոնապես լիազորեց նրան սկսել **ավետարանական ռեֆորմը**: Սրա հետևանքով եկեղեցին վերածվեց լոկ աղոթատան³, եկեղեցական ծառայությունը՝ միայն Աստծո խոսքի քարոզչության, սրբերի մասունքները թաղվեցին հողում, վանքերը փակվեցին,

³ Ինչպես մահմեդականության մոտ (տես նաև հուդայության մեջ...):

ուխտագնացությունները դադարեցվեցին, տոները խիստ կրճատվեցին, նկարագարող պատերը սպիտակացվեցին և այլն: **Նա ավելի հեռացավ ավանդությունից, քան Լյութերն ու Կալվինը:** Նա քննադատում էր ոչ միայն կաթոլիկներին, այլև բողոքականներին, այդ թվում նաև Լյութերին՝ համարելով, որ նրանք ճանապարհի կեսին են կանգնել: Ցվինգլին քշում է իր նախկին դաշնակիցներին՝ անաբապտիստներին: Նա բարեփոխման ենթարկեց նաև քաղաքական կարգերը՝ առաջնորդվելով հանրապետական ոգով և **եկեղեցին ենթարկեցրեց քաղաքային իշխանություններին:** Երկրի կառավարման ոլորտում նա կարևորում էր «մարգարեի» դերը, որը պետք է քաղաքացիներին հայտներ Աստծո կամքը, պետության մեջ լինելու խորհրդատու և խրատատու:

Ցվինգլին մահանում է կաթոլիկների դեմ երկրորդ ճակատամարտում: Նրա հետևորդները շուտով միաձուլվում են կալվինիզմի հետ:

Ռեֆորմացիայի շրջանի բողոքական շարժումներ

«Վերածննդի» շրջանի ավարտին՝ XVIդ. 30-ականներին, ի հայտ եկավ **«Ռեֆորմացիան» (լատիներեն reformation – բարեփոխում, ձևափոխում)**, ինչը «Վերածննդի» հետևանքն է, վերջինիս առաջ քաշած գաղափարների իրագործումը, որի առաջին մունետիկը եղավ գերմանացի **Մարտին Լյութերը**՝ ծնված 1483թ., Գերմանիայի Վիտենբերգ քաղաքում: Լյութերը տեղական քահանա էր և աստվածաբանության պրոֆեսոր: 1517թ. նա՝ հրաժարվելով տալ ինդուլգենցիայի վճարը, որ նախատեսվում էր ծախսել Զոմմի Ս. Պետրոս տաճարի կառուցման վրա, փակում է իր տաճարի դռները և վրան կախում իր՝ մասնավորապես ինդուլգենցիան դատապարտող հանրահայտ 95 թեզիսները: Սա համարվում է բողոքական շարժման ձևական սկիզբը: Թեև Վորմսի ժողովը դատապարտում է նրա ուսմունքը, նա շարունակում է այն ու եկեղեցու նորացման, **առաքելական ժամանակների վաղ քրիստոնեությանը վերադառնալու կոչ անում:** Այս նոր հոսանքը պաշտոնապես ձևավորվում է 1521թ. ի դեմ **«Աուգսբուրգյան դավանանք»**-ի⁴, որը կազմել է Լյութերի ընկեր ու հետևորդ Ֆ. Մելանխթոնը: Լյութերը բոլոր քրիստոնյաներին համարում էր քահանայությանը հավասարապես օժտված: Ըստ նրա, հավատը հավատացյալի ներքին վիճակի, զուտ անհատական ակտ է: Ուստի, մերժվում են սրբերը, եկեղեցու հայրերի ավանդությունները, քանի որ բոլոր մարդիկ մեղսական են, Տիեզերական ժողովի որոշումները: Բայց XVI-XVIIդդ. վրա է հասնում հումանիստական անհատականության ճգնաժամը:

Բողոքականության նախնական դրսևորումներից են համարվում «Ռեֆորմացիայի» գործընթացում ծնունդ առած միավորներից **պուրիտանությունը** (անգլիական բողոքականների կամ կալվինիստներ. լատիներեն purus – մաքուր բառից), **անաբատիզմը, մենոնականությունը, սոցինիանականությունը:**

⁴ Երկարատև ընդհարումներից հետո Գերմանիայում 1555թ. ստորագրվում է Աուգսբուրգյան պայմանագիրը, ըստ որի հավատի (դավանանքի) ընտրությունը յուրաքանչյուր առանձին իշխանության գործն է:

Կալվինիզմ (բարեփոխականություն)

Բողոքական ուղղություն է, որը հիմնել է ժամ Կալվինը (1509-1564թթ.), Շվեյցարիայում, XVIդ.: Այն ժնն քաղաք-պետությունից մուտք գործեց Ֆրանսիա, Նիդերլանդներ, Շոտլանդիա և Անգլիա: Նրա ուսմունքը բողոքական շարժման ուսմունքներից ամենաընդգրկունն ու հակիրճն էր: Կալվինականության հիմնական առանձնահատկությունը **բացարձակ կանխորոշվածության ուսմունքն** է: Համաձայն այս ուսմունքի յուրաքանչյուր մարդու ճակատագիրը նախապես կանխորոշված է ի վերուստ, ուստի, բոլոր մարդիկ բաժանվում են ընտրյալների, որոնք պետք է վայելեն երանությունը, և՛ կործանման դատապարտվածների: Ո՛չ հավատը, ո՛չ էլ մարդու գործերը չեն կարող փոխել նրա ճակատագիրը: Եվ սա մեծագույն գաղտնիք է: Բայց գոյություն ունեն **ընտրվածության անուղղակի վկայություններ**⁵ մարդու մեջ խոր անհատական հավատի առկայությունը և նրա մասնագիտական հաջողությունները: Ըստ այսմ կալվինիստները համարում էին, որ գործի մեջ (հիմնականում կրթության, մասնագիտական գործունեության) **մարդու հաջողակ լինելը նշան է այն բանի, որ նա ընտրված է Աստծո կողմից**: Նկատենք, որ հենց այստեղից բխեցին մրցակցության ձգտումը, խնայողությունը, կուտակումը, հասարակական և բարոյական վարքի նոր սկզբունքները: Նկատենք նաև, որ ըստ Կալվինի խաչը չի կարելի պաշտել, քանի որ այն պատժի գործիք է (հետագայում այն պետք է օգտագործեն եհովականները...): Հարկ է նկատել նաև, որ, ի տարբերություն լութերականության, կալվինականությունը մերժում է Քրիստոսի մարմնի և արյան «ներկայությունը» հաղորդության ժամանակ:

Փաստորեն, այս ուսմունքը **ծայրահեղորեն անհատականացրեց հավատը և փրկության ողջ պատասխանատվությունը վերապահեց Տիրոջը՝ մարդուն միանգամայն ազատելով դրանից**:

Սոցիալական ուղորտում կալվինիստները ավանդաբար ուժեղ պետականության (բայց իրենց) կողմնակից են, որտեղ էական դեր ունի օրենքի գերակայությունը: Այսինքն՝ ձգտումը դեպի այն ամենը, ինչը նպաստեց կապիտալիստական հասարակության ու տնտեսական համակարգի զարգացմանը: Ուշագրավ է, որ հետագայում նրանք սկսեցին կորցնել իրենց խստությունն ու արմատականությունը, ինչը, բնականաբար, առավել ևս խթանեց վերոնշյալ ձգտումը: Այս ուսմունքը հետևորդներից պահանջում է կատարյալ հնազանդություն, պարզություն, խստակեցություն, դաժան սկզբունքներ, կյանքի կանոնակարգում՝ ընդհուպ մինչև մանրուքները: Եկեղեցու կառույցը հանրապետական է:

Կալվինը Պապի նման անհանդուրժող էր այլախոհների նկատմամբ:

Կալվինիզմի հետևորդները Ֆրանսիայում XVI-XVIIIդ.դ. կոչվում էին **գուգենոտներ**⁵, իսկ Անգլիայում, XVI-XVIIդ.դ.՝ **պուրիտաններ**: Վերջիններս հանդես էին գալիս հանուն վերևից կատարվող բարեփոխման խորացման՝ անգլիկանության տեսքով և ընդդեմ աբսոլյուտիզմի: Նրանք ունեն երկու ճյուղ՝ չափավորական, որ **երիցականությունն** է և արմատական (անկախական): Կալվինիզմի դրոշի ներքո տեղի ունեցան նիդերլանդական (XVIդ.) ու անգլիական (XVIIդ.) **բուրժուական հեղափոխությունները**: Կալվինականության

⁵1527թ. օգոստոսի 24-ի (Ս. Բարդուղիմեոսի օրը) գիշերը՝ թագուհի Եկատիրինա Մեդիչին (որը կատաղի կաթոլիկ էր) կազմակերպեց 30 հազար հուգենոտների ջարդը:

ժամանակակից հետևողներն են բարեփոխականները, երիցականները, ժողովականները (կոնգրեգացիոնալիստներ), որոնք կորցրել են իրենց երբեմնի արմատականությունը (մասնավորապես բացարձակ կանխորոշվածության սկզբունքը⁶) և շատ բաներում մոտեցել են **յութերական** և **ավետարանական** ուսմունքներին:

Այս ուսմունքի հիման վրա Կալվինը 1539թ. ժնկում ստեղծեց աստվածավարական բռնապետություն՝ ինքնատիպ բուրժուական կրոնապետություն⁷:

Յաղոքողության հացի ու գինու կապակցությամբ **յութերականությունն** առաջ քաշեց դրանցում ինչպես բնական հացի և գինու, այնպես էլ Քրիստոսի մարմնի ու արյան համագոյության գաղափարը: **Ցվինգլիականությունը՝ մայրցամաքային բողոքականության** մեկ այլ հոսանքը, մերժում էր խորհրդի մեջ Քրիստոսի իրական ներկայությունը՝ ողջ արարողությանը լոկ Քրիստոսի զոհաբերության հիշատակման սիմվոլիկ բնույթ վերագրելով: **Կալվինիզմը** զարգացրեց մի ուսմունք, որն այս երկու հայացքների միջև զբաղեցնում է մի **միջին դիրք**. Նա մերժում էր, որ հացն ու գինին վերափոխվում են Քրիստոսի մարմնին և արյանը (այսինքն՝ դրանք մնում են հաց ու գինի), սակայն հավատացյալներն իբր իրենց հավատի շնորհիվ ձեռք են բերում Քրիստոսի մարմնի ու արյան ուժ, այնպես կարծես, թե նրանք հիրավի ընդունել են դրանք: Հետևապես, հացի ու գինու վերափոխումը մարմնի ու արյան կատարվում է ոչ թե «օբյեկտիվորեն», ոչ թե իրականում, այլ «սուբյեկտիվորեն»՝ անձնական հավատի հիման վրա, կախված այդ հավատի «ճշմարտացիությունից»:

Անգլիկան եկեղեցի

Բողոքական եկեղեցի, որ ծագել է **XVI**դ. Մեծ Բրիտանիայում (պետական եկեղեցի): «Բարեփոխումը» Անգլիայի համար լավ առիթ էր տեղական եկեղեցին Հռոմից կտրելու համար, որը և տեղի ունեցավ 1534թ. Հենրի VIII թագավորի ձեռքով (պառլամենտի ակտով): Նկատենք, որ 1529-1536թթ. Անգլիայում նիստեր սկսեց գումարել «Ռեֆորմացիոն պառլամենտը»: Բայց Անգլիայում ծագած բողոքականության այս տարատեսակության համար հող ստեղծեց Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր **Ջոն Ուիկլիֆը** (1320-1384թթ.)՝ օգտվելով յութերականության ու կալվինիզմի գաղափարներից: Նա ընդդիմանում էր քահանայական շնորհին՝ կասկածի տակ դնելով քահանայի դերը: Համարում էր, որ Ավետարանի միակ ճիշտ ընկալումը վերջինիս տառացի ընկալումն է, և քանի որ այն շատ պարզ է, համարում էր, որ այն կարելի է տալ աշխատավորների ձեռքը:

Անգլիկան եկեղեցին կաթոլիկության ու բողոքականության միջև մի «միջնագիծ» դարձավ, եղավ երկուսի համադրությունը: Տեղի ունեցավ եկեղեցու ունեցավժքի օտարում (սեկուլյարիզացիան), փակվեցին վանքերը: Պահպանվեցին եկեղեցու միջոցով փրկվելու վարդապետությունը, եկեղեցական նվիրապետությունը և քահանայությունը, Սրբազան ավանդությունը, բայց մահաժամանակ, միայն Սուրբ Գիրքն (այլ ոչ թե ավանդությունը) էր համարվում ուսմունքի միակ աղբյուր: Ներմուծվեց «հավատքով արդարանալու» սկզբունքը,

⁶ Նիժաաի=իեե Ծաեեայ, Նաիաա նաանոե, Աինոաանոաաիւ-օաճեիաւ ու իւիժաիեյ ա Ճիննե", Ի նեաա, 1996, Ճիննեեեայ Աեաաի եյ աինոաանոաաիւե նեօաան իժե իժաբեաաիւա Ճիննեեիե Օաաաժաօե, Էիլիեժո ի նայչյի ն ժաեեիեչիւիե իժաիբաժօեյիե իժաեօաեւնոաա Ի նեաա.

⁷ Ծաեեայ ե օաճեիաւ ա Աիաեե, Բ.Բ. Աաեօ, Եբաաօեւնոաի Ի աօեա, Ի նեաա, 1976, ս.9.

ընդունվում էին միայն երկու խորհուրդները, իսկ քահանայի ձեռնադրությունը լոկ խորհրդանշական էր: Այստեղ քահանա լինել թույլատրվում է նաև կնոջը: Անգլիկան եկեղեցին, բողոքական եկեղեցիների նմանությամբ, միասնական չէ (կազմված է ավելի քան 20 ինքնավար եկեղեցիներից):

1990թ. Անգլիկան եկեղեցու Սինոդը որոշում ընդունեց կին քահանա ձեռնադրելու մասին:

Անգլիկան եկեղեցու կենտրոնը Քենտրբերիի եպարքությունն է, Քենտրբերիի և Յորքի արքեպիսկոպոսները նշանակվում են թագավորի կողմից, որը գլխավորում է եկեղեցու նվիրապետությունը:

Աշխարհում կան մոտ 70 միլիոն անգլիկաններ:

Անաբապտիստներ

Անվանումը ծագել է հունարեն “anabaptzo” - «կրկին ընկղմում են», այսինքն վերստին կամ՝ կրկին մկրտում են: Այն ծագել է Շվեյցարիայում և Գերմանիայում՝ «Ռեֆորմացիայի» շրջանի սկզբում (XVIդ.), զարգանում է Թ. Մյունցերի գլխավորած շարժման շրջանակներում արագ տարածվում է հարևան երկրներ՝ Նիդերլանդներ, Սորավիա ևն: **Արմատական բողոքական աղանդիների ներկայացուցիչն են**, որոնք քննադատաբար են մոտենում բազում եկեղեցական ավանդությունների ու ծեսերի, մասնավորապես՝ մանկամկրտությանը: Ազատ եկեղեցի ստեղծելու նպատակով, որի գործերին չի միջամտի պետությունը, պահանջում էին կրկնամկրտություն չափահաս շրջանում: Չափահասների նման առաջին մկրտությունը տեղի ունեցավ Ցյուրիխում՝ 1525թ.: Այս համայնքի հետևորդներին Ցվինգլին տվեց «կրկնամկրտականներ (անաբապտիստներ)» անունը: Նրանք չէին ընդունում ավանդական եկեղեցու կողմից տրված Քրիստոսի մարմնավորման բացատրությունը, չէին ընդունում Ս. Գրքերի բաժարձակ հեղինակությունը՝ համարելով, որ կրոնի հիմքը անհատական հավատն է: Նրանք եղան եկեղեցին պետությունից անջատելու և անհատի կրոնական ազատության գաղափարների առաջամարտիկները: Նրանց ուսմունքում գերակշռում էր պացիֆիզմը: Պայքարում էին եկեղեցական ու ֆեոդալական արտոնությունների վերացման համար: Այս պահանջների իրականացումը նրանք դիտում էին որպես երկրի վրա Աստծո Արքայության հաստատման սկիզբ: Անաբապտիստները Գերմանիայի գյուղացիների կրոնական պատերազմում գլխավոր արմատական թևն էին կազմում՝ արտահայտելով աղքատների շահերը: Ապստամբության ճնշման հատկանքով նրանց մարտնչող հայացքները իրենց տեղը զիջեցին չհակադրվելու քարոզներին, ինչը դարձավ «խաղաղ անաբապտիստների» առանձնահատկությունը, որոնք հետագայում սկիզբ տվեցին **մենոնականների աղանդին: Հասարակության վերափոխման գաղափարները** փոխարինվեց **վախճանաբանական սպասումով և երկրորդ գալստյան հույսով:** Պարտություն կրելով, նրանք փախան Հոլանդիա, Անգլիա, Չեխիա, Սորավիա, ավելի ուշ՝ Հյուս. Ամերիկա: Նրանց մի մասը սկիզբ դրեց մի շարք բողոքական աղանդների (մենոնականներ, մելխիորականներ, գուտերյան եղբայրներ ևն), մտան բողոքականության տարբեր հոսանքների, այդ թվում նաև բապտիստների, մեջ:

Անաբապտիստների որոշ գաղափարներ ընդունվեցին բապտիստների ու քվակերների կողմից: **Մենոնականները** (ԱՄՆ-ում՝ մոտ 150 հազար, Կանադայում՝ մոտ 125 հազար, Եվրոպական երկրներում՝ մոտ 100 հազար), **գուտեյան եղբայրները** և անաբապտիստների մյուս հաջորդները ևս մերժում էին բռնությունը, զենք կրելն ու կիրառելը, դատապարտում երդումը՝ որպես կռապաշտություն, արգելում իրենց հետևորդներին զինվորական և պետական ծառայության անցնել:

Մանրբուժուական կրոնական արմատականության օրինակ կարող են ծառայել **մկրտականները (բապտիստները)**, որոնք ծագումնաբանորեն կապված են «խաղաղ անաբապտիստների» (մենոնականների)⁸ հետ: Նրանք պահանջում էին, որ մագիստրատը «խղճի ազատության քրիստոնեական դավանանքը ապահովի բոլորի համար», իսկ եկեղեցու անդամ էին համարում միայն նրանց, ովքեր գիտակցաբար ընդունում էին մկրտությունը: Սակայն ամերիկյան բապտիստ Ռոջեր Ուիլյամսի անունը միայն պատահամամբ մտավ պատմության մեջ որպես բնական իրավունքի տեսանկյունից հավատահանդուրժողականության և խղճի ազատության սկզբունքի առավել մարտնչող պաշտպաններից մեկը:

Մարտնչող դիրքեր է գրավում մկրտական քարոզիչ Ջ. Ֆոլուելի կազմակերպությունը՝ իր «**գալիք Արմագեդոնի**» ուսմունքով:

XX դարի ամենահայտնի ու ազդեցիկ քարոզչի համբավ ունեցող բապտիստական պրեսբիտեր **Բիլի (Ուիլյամ) Գրեհեմը**⁹ «Համաշխարհային ավետարանական ընկերության» հիմնադիրն ու ղեկավարն է:

Մենոնականներ (մենոնիտներ)

Հնագույն հոսանքներից մեկն է, որը սկիզբ է առել Նիդերլանդներում՝ XVIդ. 30-ականներին: Հիմնադիրն է հոլանդացի կաթոլիկ քահանա Մենո Սիմոնսը (1492-1559թթ.): Հեռանալով կաթոլիկությունից, նա իր շուրջը հավաքեց 1534-1535թթ. ժողովրդական շարժման և Սյունթերական կոմունայի ջախջախումից բզկտված **նիդերլանդական անաբապտիստների չափավոր կողմնակիցներին ու հեղափոխականորեն տրամադրված անաբապտիստների մնացորդներին**՝ ստեղծելով մի նոր հոսանք: Հանդես էր գալիս **չհակադրվելու քարոզով**՝ հորդորելով աշխարհում գոյություն ունեցող չարի դեմ պայքարում հրաժարվել բռնությունից: Հետևում են բողոքականության առավել արմատական **սկզբունքներին**: Նրա «Քրիստոնեական հավատի հիմքը» աշխատությունը՝ Սուրբ գրքի հետ մեկտեղ, համարվում է մենոնականների ուսմունքի աղբյուրը: Իր հետևորդների համայնքը նա համարում էր «սրբերի համայնք», «Աստծո վերածնված ընտրյալներ»: Նրանց ուսմունքն ու ծեսերը հիմնականում վերցված են անաբապտիստներից: Ուսմունքի սկզբունքները շարադրված են «Մեր ընդհանուր քրիստոնեական հավատի գլխավոր հոդվածների հռչակագիրը»-ում, որն ընդունվել է 1632թ. Դարտյան կոնֆերանսում: Մենոնականների

⁸ Ἰ δὲ δαπάναι δέξι , Νεὶ ἀάδῃ ἀδὰεῆδὰ, Ν 14.

⁹ Ἰ δὲ δαπάναι δέξι , Νεὶ ἀάδῃ ἀδὰεῆδὰ, Ν 83.

համար եկեղեցու խորհուրդները լոկ հավատի արտաքին նշաններ են, այլ ոչ թե շնորհատվության գործողություն: Բռնությունը մերժելու սկզբունքից ելնելով, **հրաժարվում են ծառայել բանակում՝ հակադրվելով պետական իշխանությանը:** XVIդ. 40-50թթ. հերետիկոսների նկատմամբ Նիդերլանդներում ուժեղացած հետապնդումները շատերին մղեց հեռանալ, որոնց նշանակալի մասը տեղափոխվեց Լեհաստան: Այստեղից Ռուսաստան սկսեցին տեղափոխվել 1789թ.:

Աշխարհում կան մոտ 500 հազար մենոնականներ:

Ամիշները մենոնականության ուղղություններից մեկն է հանդիսանում: Անվանումը ծագում է XVIIդ. գործած էլզասի մենոնական առաջնորդ Չակոբ Ամմանի անունից, որը պնդում էր տառացիորեն հետևել 1632թ. Դրրտում տեղի ունեցած համաժողովում ընդունված հիմնադիր կանոններին: 1954թ. իրենց կոչում են նաև Մենոնական պահպանողական եկեղեցի:

Չակակաթուղիական, կենտրոնախույս ուղղվածությունը և չափազանց խայտաբղետ սոցիալական բազան կանխորոշեցին բողոքականության արագորեն տեղի ունեցող տրոհումները բազմաթիվ ուղղությունների, ինքնուրույն եկեղեցիների, հարանվանությունների, անկախ համայնքների, որոնց ուսմունքներում առկա էին էական տարբերություններ: Չետագայում բողոքականության այս տարատեսակությունները դուրս եկան այն երկրների սահմաններից, որտեղ դրանք սկզբնավորվել էին: Նրանց շարունակ մասնատումների և նորամուծությունների հետևանքով ձևավորվում էին բողոքական նոր ուղղություններ, ինչպիսիք են. **երիցականությունը, բապտիստները, մեթոդիստները, հիսնականությունը, ադվենտիստները** և այլք: Մենոնականների ուկրաինական ճյուղը կոչվում է «Եղբայրական մենոնականներ»:

Երիցականություն (պրեսբիտերականներ)

Երիցականների (հունարեն **“presbyteros”** - ավագ, երեց) հայրենիքը Անգլիան և Շոտլանդիան են, որտեղ պուրիտանները, ի հակակշիռ կաթոլիկների ու անգլիկանների, XVIդ. երկրորդ կեսին ստեղծեցին իրենց եկեղեցին: Նրանք ընդդիմանում էին թե՛ կաթոլիկությանը և թե՛ անգլիկանությանը: Երիցականության ուսմունքի հիմնական սկզբունքները շարադրված են **Վեստմինստրյան դավանանքում** (1647-1648թթ.), որը փոքր-ինչ փոփոխվել է ամերիկյան երիցականների կողմից: Կալվինականությունը փրկությունը դիտարկում է ոչ թե որպես վաստակի արդյունք, այլ որպես միմիայն Աստծո կողմից կանխորոշված շնորհ: Ընդունվում է երկու խորհուրդ՝ մկրտությունը և հաղորդությունը: Երեխայի մկրտությունն ընդունում են, եթե նրա ծնողները երիցական հավատացյալներ են և իրենց վրա են վերցնում երեխայի հոգևոր դաստիարակության պարտավորությունը:

Եկեղեցական համայնքը (տեղական եկեղեցին) ղեկավարում է երիցական խորհուրդը՝ կոնսիստորիան, որը հավատացյալների միջից ընտրում է կամ այլ տեղից ծառայելու է հրավիրում հովիվ՝ համայնքի հոգևոր ղեկավարին: Երիցականներն ընդհանրապես **չունեն քահանայություն:** Չամայնքները (կոնգրեգացիաները) գլխավորում են **երեցները, որոնց միջև**

բացակայում է նվիրապետական որևէ կապ: Երեցներն ընտրվում են աշխարհականների կողմից: Պաշտամունքային արարողությունը առավելագույնս պարզեցված է՝ ընթերցում են Ավետարան, աղոթում, երգում հավատացյալների երգչախմբով: **Պաշտամունքի կանոններ չունեն:** Պաշտամունքը կարող է տեղի ունենալ ցանկացած շենքում:

Երիցական շատ եկեղեցիներ մտնում են Բարեփոխական եկեղեցիների համաշխարհային ալյանսի մեջ:

Բապտիստներ և Ավետարանի քրիստոնյաներ (Սկրտական հարանվանություն)

Բողոքականության խոշոր տարատեսակ է, որը ծագել է XVII դ. սկզբին և մեծապես զարգացում ապրել՝ XIX-XX դդ.: Այս ուղղության անվանումը (ամբողջական բապտիստական հարանվանություն, ըստ էության, գոյություն չունի) ծագում է հունարեն «baptizo» բառից, որ նշանակում է ընկղմել ջրի մեջ, մկրտել ջրով: Նրանք համարելով, որ կաթոլիկական մկրտությունը սխալ է, կրկին անգամ են մկրտում՝ ընկղմելով մկրտյալին ջրի մեջ: Սկրտում են միայն չափահաս մարդկանց:

Միմյանցից անկախ, բայց միաժամանակ ի հայտ են գալիս նապտիզմի երկու ուղղություններ.

1. **ընդհանուր** («ջեներալ», «հիմնական») բապտիստներ (հոլանդական քահանա Զակոբ Արմինիայի/1560-1606/ հետևորդներ),
2. **մասնավոր** բապտիստներ (բապտիստների մեջ մեծամասնություն կամող թևն է):

«Ընդհանուր» բապտիստների գաղափարների ժառանգորդներ են ավետարանի քրիստոնյաները (ՀՀ-ում այս ուղղությունն է գործում): Նրանք համարում են, որ բոլոր մարդիկ փրկված են Քրիստոսի տանջանքների միջոցով (յուրաքանչյուրը կարող է դրախտ ընկնել՝ կախված այն բանից, բարի, թե չար գործ է արել), իսկ **երկրորդները հետևում են Կալվինի ուսմունքին**, համաձայն որի յուրաքանչյուրի համար ամեն բան արդեն կանխորոշված է և փրկվել կարող են միայն Աստծո ընտրյալները:

Միսիոներությունը յուրաքանչյուր բապտիստի պարտքն է:

Ինչպես և բողոքականության մյուս ուղղությունները, բապտիստները ևս մերժում են խաչի և սրբապատկերների պաշտամունքը, սրբերին, վանականությունը, մանկամկրտությունը: Բապտիստների գլխավոր արարողությունը գիտակից կերպով և հանրորեն ջրով մկրտությունն ընդունելն է: Սրանք պարզեցրին պաշտամունքային եկեղեցական կազմակերպումը: Չընդունելով եկեղեցու խորհուրդները, մկրտությունն ու հաղորդությունն ընդունում են իմաստից զուրկ ծեսեր: Նրանք նշում են մեծ համաքրիստոնեական տոները, ինչպես նաև իրենց հանդիսավոր ու հիշարժան օրերը: Ուսմունքի և քարոզության մեջ նրանք առաջնայնություն են տալիս բարոյականության խնդրին, հակադրելով բապտիստների ընտյալությունն ու բարոյական մաքրությունը շրջապատող մեղսավոր աշխարհին: Այս համոզմունքը հիմք է հանդիսանում **միսիոներական ակտիվության համար, որն ուղղված է երկրի բնակչության ավետարանականացմանը:**

Պաշտամունքային ծառայությունն անվանում են աղոթաժողովներ, որոնք անց են կացնում շաբաթական 2-3 անգամ: Քարոզներ կարդում են ոչ միայն երեցները, հովիվներն ու քարոզիչները, այլև շարքային հավատացյալները, ինչպես նաև այլ համայնքներից եկած հյուրերը: Ծառայության մեջ մեծ տեղ է տրվում թե՛ խորային և թե՛ ընդհանուր երգեցողությանը: Ընդունված է ձեռնադրությունը, որն օգտագործում են երեցների ու սարկավազների նվիրաբերման: Բապտիստները Կովկասում հայտնվել են 1860-ականներին: 1944թ. բապտիստների և ավետարանական քրիստոնյաների միավորման հետևանքով ԽՍՀՄ-ում ձևավորվեց **Ավետարանի քրիստոնյա-բապտիստների Միությունը**, որին 1945-1947թթ. միացան հիսնականների որոշ ուղղություններ, իսկ 1963թ.՝ եղբայրական մեծոհականները:

Ամերիկյան նախագահներից շատերը եղել են բապտիստներ: 1910-175թթ. ընթացքում նրանց թիվն ԱՄՆ-ում 400 000-ից անկում է ապրել¹⁰ մինչև 190 000:

Աշխարհում կան ավելի քան 75 միլիոն բապտիստներ:

Հայաստանում պետական գրանցում են ստացել մկրտական թվով 9 տարբեր կրոնական կազմակերպություններ «ավետարանական մկրտական քրիստոնյաներ» անունով: **(Տես «Այլ դավանանքներ» գլխի «Հայաստանի կրոնական կազմակերպությունները» բաժնի «Մկրտական կազմակերպություններ» նյութը):**

Քվակերներ (ցնցվողներ)

Քվակերների (անգլերեն quake-ցնցվել, դողացնել՝ ըստ Փիլիպ. 12-12-ի) ինքնանվանումն է **«Society of Friend» – «Ընկերների ընկերություն»**: Նրանք արմատական բողոքական հոսանքի հետևորդներ են, ծնունդ են առել XVIIդ. Անգլիայում և կոչվել են **«Ներքին լույսի քրիստոնեական ընկերություն»**: Հիմնադիրն է Ջոն Ֆոքսը: Փոքրաթիվ համայնքներ կան ԱՄՆ-ում, Անգլիայում և Կանադայում: Կտրականապես մերժում են եկեղեցական ուսմունքն ու պաշտամունքը, հետևողականորեն առաջ են տանում «քրիստոնեական հումանիզմի ու ինդիվիդուալիզմի» գաղափարը: Չնայած իրենց համեմատաբար փոքր թվաքանակին, նրանք **նշանակալի ազդեցություն են ունեցել Արևմտյան Եվրոպայի ու ԱՄՆ-ի կրոնական ու մշակութային կյանքի վրա**: Ուսմունքի հիմքում ընկած է պատկերացումն այն մասին, որ Աստված ներկա է յուրաքանչյուր մարդու հոգում («ներքին լույս», «խոսք», «ներքին Քրիստոս»), մարդն ընդունակ է այն զգալու և հետևելու աստվածային կոչումին: Բարձրագույն ճշմարտությունը ոչ թե հավատի խոստովանության, գրքերի ու քարոզների մեջ է, այլ՝ մարդու ներսում, և նրան ճանաչելու համար պետք է ականջ դնել սեփական ներքին ձայնին, որն էլ հենց Աստծո ձայնն է: Աստվածաշունչը կարիք ունի «ներքին լույսի» միջոցով մեկնաբանվելու՝ հաղորդակցվելու համար վերջինիս հեղինակներին լուսավորած Ս. Հոգու հետ: **Հեռանալով անգամ բողոքական ուսմունքից, քվակերները մերժում են ցանկացած պարտադիր պաշտամունք, խորհուրդ, ծիսակատարություն (այդ թվում նաև՝ մկրտությունն ու հաղորդությունը)**: Նրանց աղոթատներում բացակայում են կրոնական խորհրդանշանները, թույլ չի տրվում

¹⁰ Dææææy è òàðèi àù à Àí àèèè, Β.Β. Àáéø, èçààòàèùñòàí Í àòèà, Ì î ñèàà, 1976:

երգեցողությունն ու երաժշտությունը, ինչպես նաև կանոնական քարոզները: Կիրակի օրերին նրանք հավաքվում են ու խորունկ լռություն պահպանում այնքան ժամանակ, քանի դեռ որևէ մեկը ինչ-որ բան ասելու կարիք չզգա: Աղոթաժողովների ժամանակ նրանք **յուրահատուկ հուզավառության մեջ են ընկնում** («ներքին լույսով պայծառանում»), պատմում են իրենց երազները, **խոսում են Աստծո անունից, դողացնում ու ցնցվում՝** գտնվելով տրանսի վիճակում: ԱՄՆ-ում նրանք ջանում են ապրել ինքնամոլոր կյանքով:

Հատկապես հայտնի է նրանց **«խաղաղության մասին վկայությունը»**. հենց քվակերներն են մշակել բացարձակապես անփոխգիշում պացիֆիզմի ուսմունքը՝ կտրականապես մերժելով ամեն տեսակ բռնություն, անգամ ինքնապաշտպանության նպատակով: Սրանից ելնելով, նրանք մշտապես հրաժարվել են զենք կրելուց, հանդես եկել խաղասիրական կոչելով ու ծրագրելով: Նրանք քարոզում են կրոնական լիակատար հանդուրժողականություն, քանի որ բոլոր մարդիկ աստվածային լույսի կրողներ են և միատեսակորեն սուրբ են: Նրանք դարեր շարունակ ակտիվ պայքարել են ընդդեմ ստրկության, մահապատժի, դատապարտյալների նկատմամբ հակամարդասիրական վերաբերմունքի, նեգրատյացության:

1656թ. ի վեր քվակերյան շարժման կենտրոնն աստիճանաբար Անգլիայից տեղափոխվել է ԱՄՆ:

Աշխարհում կան մոտ 200 հազար քվակերներ:

Մեթոդիստներ

XVIII. առաջին կեսը բարենպաստ էր կրոնական ճյուղավորումների համար: **Բողոքական միջավայրում սկիզբ էր առել ռիվայվելիզմի (Revivalism)՝ «հոգևոր կյանքի արթնության» շարժումը**, որն առիթ տվեց բողոքական (մասնավորապես բապտիստական ու մեթոդիստական) նոր հարանվանությունների ստեղծմանը:

Այս շրջանում անգլիկանության շրջանակում ծագեց մեթոդիստների հոսանքը: Հիմնադիրը Անգլիկան եկեղեցու հովիվ Ջոն Ուեսլին է, որ նպատակ ուներ անգլիկանությունը բարեփոխել ավետարանական գործունեության (ավետարանչության) ակտիվացման ուղղությամբ՝ քարոզելով Ավետարանը բանվորների, քաղաքաբնակ աղքատների և հասարակության այլ զրկյալ շերտերի միջավայրում: Ջ. Ուեսլին, որը ոչ մի տարածայնություն չունեի անգլիկան դավանանքի հետ, մտահոգվելով այն բանով, որ Անգլիայի եկեղեցին բավականաչափ ազդեցություն չունեի Անգլիայի ողջ բնակչության վրա, իր առջև խնդիր դրեց մշակել կրոնական գաղափարախոսության տարածման նոր մեթոդներ (այստեղից էլ «մեթոդիստներ» անունը): Ուեսլին սկզբում Անգլիայի եկեղեցու շրջանակներում հասարակ ժողովրդի համար ստեղծեց հատուկ կրոնական ընկերություններ: Այսինքն, մեթոդիզմն այլ բան չէր, քան նորարական հոսանք անգլիկանության մեջ: Նրանք ուսուցանում էին, որ **բոլոր մարդիկ ի ծնե օժտված են շնորհով: Կարևորում էին քարոզը:** Առանձնահատկություններից է բացօթյա զանգվածային պաշտամունքի անցկացումը, որի գլխավոր տարրերից են զգացմունքային քարոզները և ընդհանրական կրոնական երգասացությունը: Մեթոդիստները՝

խիստ կենտրոնացված կազմակերպական կառույց ստեղծելով, **1795թ. պաշտոնապես բաժանվեցին անգլիկանությունից:**

1791թ., երբ մահացավ Ուեսլին, Անգլիայում և Իռլանդիայում կային 70.000 մեթոդիստներ, որոնք բավական արագ ձևավորեցին կազմակերպորեն ինքնուրույն կրոնական հոսանք: Դրան նպաստեց մեթոդիզմի լայն տարածումը Նոր Աշխարհում, Ամերիկայում:

Մեթոդիստական եկեղեցու հիմնական կառուցվածքային ստորաբաժանումը հավատացյալների համայնքն է («հասարակություն», «դասակարգ», «տեղական եկեղեցի»): Բարձրագույն ղեկավար մարմինը ամենամյա կոնֆերանսն է, որը որոշում է դավանանքի, կազմակերպության, եկեղեցական կարգուկանոնի և այլ հարցեր, ընտրում է եկեղեցու նախագահ՝ մեկ տարի ժամկետով: Նվիրապետության ասպարեզում մեթոդիստները միավորում են կառույցի երկու ձևերը՝ եպիսկոպոսական (բողոքական իմաստով) և երիցական: Նրանք ակտիվ միսիոներական և բարեգործական գործունեություն են ծավալում: Դավանական ու ծիսական հիմնական սկզբունքները շարադրված են **«Դիսցիպլինների գրքի»** մեջ: Մեթոդիստները մկրտում են կամ մինչև 3 տարեկանը կամ 12-14 տարեկանից հետո: Այլ քրիստոնեական ավանդույթամբ մկրտվածները մեթոդիստ դառնալիս կարիք չունեն կրկին մկրտվելու:

Մեթոդիստական եկեղեցին ընդհանուր առմամբ, պահպանում է կալվինիստական ավանդությունը: Ուսմունքի առումով նրանք բաժանվում են երկու մասի. մեկը խստորեն հետևում է ընտրյալության ու կանխորոշվածության կալվինիստական, մյուսը՝ արմինյանական ուսմունքին (կապված ընդհանուր բապտիզմի հիմնադիր Յակոբ Արմինիայի հետ), որը կալվինիզմի ավելի լիբերալ տեսակն է, որ ընդունում է կամքի ազատությունը: 1932թ. Մեծ Բրիտանիայում ստեղծվում է միասնական մեթոդիստական եկեղեցին, որը միավորում է նախկինում անկախ Ուելսիական մեթոդական, Պարզունակ մեթոդական և Միավորված մեթոդական եկեղեցիները: Անգլիայում մեթոդիստները բանակցություններ են վարում Անգլիկան եկեղեցուն միանալու ուղղությամբ:

Մեթոդիզմը լայնորեն տարածված է Մեծ Բրիտանիայում, մի շարք եվրոպական և ամերիկյան երկրներում, Հարավային Կորեայում: ԱՄՆ-ում այն ամենազդեցիկ ու բազմաճյուղ բողոքական եկեղեցիներից մեկն է: 1881թ. ի վեր գոյություն ունի Համաշխարհային մեթոդիստական խորհուրդը, որի կենտրոնակայանը Նյու-Յորքում է: Չորս տարին մեկ անգամ գումարվում է Համաշխարհային գերագույն կոնֆերանսը, որն ընտրում է Խորհրդի ղեկավարություն: ԱՄՆ-ում մեթոդիստներն իրենց հետևորդների թվով մկրտականներից հետո հաջորդն են:

Այն հանգամանքը, որ մեթոդիստները վերջին տարիներին արագորեն կորցնում են իրենց հետևորդներին, հարկադրեց նրան ակտիվ բանակցություններ վարել անգլիկանության հետ միավորվելու նպատակով:

1985թ. աշխարհում հաշվվում էր մոտ 32 միլիոն մեթոդիստ:

Հայաստանում գործում է ԱՄՆ-ի Միացյալ մեթոդիստական եկեղեցու Հյուսիսային Կարոլինայի և Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի թեմերի կողմից հիմնադրված «ԱԳԱՊԵ»

կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղը: (Տես «Այլ դավանանքներ» գլխի «Հայաստանի կրոնական կազմակերպությունները» բաժնի «Մեթոդիստական եկեղեցին» նյութը):

Օքսֆորդյան շարժում.

XIXդ. կեսերին ռեֆորմի մի նոր ալիք բռնկվեց Անգլիայի եկեղեցում: Ռեֆորմի առանցքն էր սոցիալական ուսմունքը և դրա հետ կապված պետակեղեցական հարաբերությունների հարցը: 1833թ. Անգլիայի գաղութ հանդիսացող Իռլանդիայում իրավիճակի սրման հետ կապված, ուր բողոքական կառավարող փոքրամասնությունը ճնշում էր երկրի բնկաչության կաթոլիկ մեծամասնությանը, Անգլիայի խորհրդարանը որոշում կայացրեց Իռլանդիայի տարածքում փոխել Անգլիայի եկեղեցու կազմակերպական կառույցը՝ 22 եպարքությունների փոխարեն թողնելով 12-ը: Այս աննշան ակտն առիթ հանդիսացավ **Օքսֆորդյան կոչվող շարժման** սկիզբ առնելու համար:

1839թ. հուլիսի 14-ին Օքսֆորդի աստվածաբան **Ջոն Քիբլն** իռլանդական եպարքությունների առիթով հանդես եկավ «Ազգային դավաճանություն» քարոզով: Նա ծայրահեղորեն ընդդիմանում էր պետության կողմից եկեղեցական գործերին կատարված միջամտությանը, և ընդգծելով եկեղեցու ինքնուրույնությունը, անկախությունը, պնդում էր այն տեսակետը, որ «եկեղեցին դուրս է հասարակությունից և վեր է նրանից»: Քիբլի այս մտքերը դրվեցին Օքսֆորդյան շարժման հիմքում: Այս շարժման այլ գաղափարախոսների **Ջ. Նյումանի** և **Է. Ժյուզիի** հետ միասին, նա հրապարակեց աստվածաբանական հոդվածների մի ամբողջ շարք, որը կոչվեց «Տրակտատներ արդի ժամանակի համար», ինչի առիթով նրանց կոչում են նաև «տրակտատականներ»: **Շարժման ղեկավար Նյումանը** հետագայում անցավ հռոմակաթոլիկ եկեղեցու շարքը և կարդինալ դարձավ: Օքսֆորդականների ձգտումը դեպի կաթոլիկություն անդրադարձավ նաև հացի ու գինու Քրիստոսի մարմնին ու արյանը փոխակերպվելու ուսմունքին, ինչի հետ նաև ողջ ավանդական ծիսակարգին... Որոշ քահանաներ անգամ սկսեցին խոստովանեցնել, որն առանձնապես վրդովեցրեց եկեղեցու «ստորին» թևին: **Աշխուժացավ վանական կյանքը: «...Այն հակադրվեց ժամանակի կոմերցիոն ոգուն»:**

Օքսֆորդյան շարժման սոցիալական ուսմունքը կոչ էր անում հավատացյալներին հեռու մնալ «մեղավոր երկրից» և ողջ ուշադրությունը սևեռել «Աստծո արքայության» վրա: Տրակտատականներն ուսուցանում էին, որ հասարակական անարդարությունը և չարիքը չեն կարող վերանալ մարդկանց ջանքերով կատարվող ռեֆորմներով և հեղափոխական գործունեությամբ: «Մենք քրիստոնյաներս ինչ գործ ունենք այս աշխարհի հույսերի և մտահոգությունների հետ, ինչ գործ ունենք փոփոխությունների պլանների հետ... կամ ռեֆորմի մասին երազանքի հետ», - բացականչում էր Նյումանը:

Սակայն նրանք էլ սկսեցին զբաղվել սոցիալական բնույթի գործերով. բնակչության առանձին խավերի մեջ՝ կրոնական գաղափարախոսություն տարածելու նպատակով ստեղծեցին բարեգործական ընկերություններ...

Օբսֆորդյան շարժումը խստացրեց պայքարը «բարձր» ու «ստորին» եկեղեցիների միջև, ուստի և եկեղեցու ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ եղավ պետական վերահսկողություն սահմանել և 1835թ. Անգլիայի եկեղեցու ռեֆորմի ծրագիր մշակելու նպատակով խորհրդարանն ստեղծեց **Հոգևոր լիազորների հանձնաժողով: Այս ռեֆորմը չէր նախատեսում վարդապետական (դոգմատիկ) և ծիսական (լիթուրգիական) փոփոխություններ, այլ վերաբերում էր գլխավորապես եկեղեցու իրավաբանական և նյութական կարգավիճակին, որի հետևանքով **ուժեղացավ եկեղեցու ֆինանսական կախվածությունը պետությունից**:**

Փրկության բանակ

Այն (անգլ. **Salvation Army**) միջազգային կրոնական-մարդասիրական կազմակերպություն է, որն իր գործունեության մեջ համատեղում է ավետարանչությունն ու նյութական կարիք ունեցող մարդկանց հոգսերի թեթևացմանն ուղղված գործուն սոցիալական ծառայությունը: Հիմնադրել է անգլիական մեթոդիստական քարոզիչ Ու. Բուբսը՝ 1878թ. վերակազմակերպելով 1865թ. ի վեր Լոնդոնի աղքատ թաղամասերում գործող Քրիստոնեական առաքելությունը: Այն ստեղծված է բանակի օրինակով, նրա ղեկավարը կրում է գեներալի կոչում, կազմակերպության ներսում գործում է խիստ աստիճանակարգն ու կարգապահությունը: Կրոնական ուսմունքը բխում է ավետարանական ուսմունքից, թեև մերժվում են բոլոր խորհուրդները և շեշտը դրվում է քրիստոնեության բարոյական կողմի վրա: Անհրաժեշտ է համարվում ընդհանրական զղջումը: Ծիսական կարևոր տարրերից են բազմամարդ ժողովներն ու հոգևոր նվագախմբի ուղեկցությամբ ընթացող երթերը:

Կենտրոնակայանը գտնվում է Լոնդոնում և իր ստորաբաժանումներն ունի աշխարհի 82 երկրներում: Անդամների ընդհանուր թիվը 2 միլիոն է:

Պլիմուտյան եղբայրներ

«Պլիմուտյան եղբայրները» բողոքական աղանդ է ստեղծվել էր Անգլիայի Պլիմուտ քաղաքում՝ 1831թ.: Այն ակտիվորեն գործել է Անգլիայում ու Իռլանդիայում: Նրա անդամները պարբերաբար տնային աղոթաժողովներ էին անցկացնում՝ հատուկ ուշադրություն դարձնելով մարգարեություններին և Ահավոր դատաստանին նախապատրաստվելուն՝ համարելով, որ այն շուտով տեղի կունենա: Ըստ նրանց Աստված շարունակ պայման (ուխտ) է կապել մարդկանց հետ և քանի որ մարդիկ միշտ խախտել են այն, հարկ է եղել կրկին կապել (Ադամ, Նոյ, Աբրահամ, Մովսես ևն): Ներկայումս իր ավարտին է մոտենում Քրիստոսի ուխտի ժամանակը և Քրիստոսը կրկին պետք է աշխարհ գա և վերականգնի Իսրայելի թագավորությունը: Այդ եղբայրության անդամների վարքը խստորեն կանոնակրգվում էր, մասնավորապես կատեգորիկ կերպով նրանց արգելվում էր հաղորդակցվել այլ հարանվանությունների հետևորդների հետ: Աղանդը նախ բաժանվում է երկու հոսանքի՝ փակ

և բաց, իսկ հետագայում մի ևս քանի անգամ պառակտվում: Թափանցում են Ֆրանսիա, Շվեյցարիա, իսկ 1860թ.՝ ԱՄՆ: Եղբայրության անդամները մերժում են քահանայությունը. անգամ մկրտությունն իրականացվում է աշխարհիկների կողմից:

Նոր աշխարհում հասարակության և պետականության ծնունդը սկսվում է 1620թ. նոյեմբեր-դեկտեմբերին «Մեյֆլաուեր» նավով հին աշխարհից նոր աշխարհ անգլիացի պուրիտանների ուխտագնացությամբ: Մինչև օրս ուխտագնացների նոր աշխարհ ժամանելու օրը՝ դեկտեմբերի 22-ը, նշվում է ամբողջ ԱՄՆ-ում որպես տոն (**Forfathers Day**): 180 անձից բաղկացած **կոնգրեգացիոնալիստների** խումբը Բրուստերի ղեկավարությամբ նավի վրա ստորագրեց համաձայնագիր եկեղեցական կովենանտի սովորույթներով, որով սահմանվեցին «Ավետյաց երկիր» մեկնելու նպատակները և այնտեղ բնակվելու օրենքները (ամերիկյան պատմաբանները այդ համաձայնագիրը անվանում են ամերիկյան սահմանադրության նախատիպ, որտեղ նրանց կարծիքով, արձանագրվել են դեմոկրատիայի առանցքային հիմնադրույթները): Համաձայնագրում հստակորեն ամրագրվեցին համայնքային ինքնակառավարման սկզբունքները և նոր երկրում տնտեսական հաջողության հասնելու ձգտումը: Ուխտագնացներն անկեղծորեն հավատում էին Աստծո կողմից ոգեշնչված առաքելությանը «Ավետյաց երկրում»: Մինչև օրս ԱՄՆ-ում հայրենասիրության և հասարակական բարոյականության նախաշավղի դեր է կատարում Ջոն Ուինտրոպի (1588-1649), որը հետագայում դարձավ Մասաչուսեթսի նահանգապետ, քարոզն արտասանված «Արաբելլա» նավի վրա՝ 1630թ.: «...Եվ եթե այդ կերպ պահպանենք մեր հոգու միասնությունը աշխարհիկ կապերում, մեր Տերն ուրախությամբ կբնակվի մեր մեջ, ինչպես Իր ընտրած ժողովրդի մեջ և կօրհնի մեր բոլոր ձեռնարկումները: ...Դրանով իսկ մենք պետք է նկատի ունենանք, որ պետք է լինենք նման Բարձունքի վրա քաղաքին, բոլոր ժողովուրդների հայացքները կհառնեն մեզ. եթե մենք գործում խաբենք Աստծո ակնկալիքները, որը նախաձեռնել ենք և ստիպենք Նրան մեզ օգնություն հատկացնել, որը Նա այժմ հատկացնում է մեզ, մենք կդառնանք ամբողջ աշխարհում առակի նյութ, ծաղրանքի առարկա...»: «Քաղաքը բարձունքի վրա» աստվածաշնչային (Եսայի 2:3) արտահայտությունը դարձավ ամերիկյան ազգային գիտակցության ամենակայուն խորհրդանիշերից մեկը:

Ուինտրոպը և պուրիտան այլ առաջնորդները հավատում էին, որ նոր աշխարհի ստեղծմամբ պատմությունը թևակոխելու էր իր բաժրագույն փուլը, որի ժամանակ պետք է հաստատվեր աստվածային թագավորությունը:

«Մեյֆլաուերի» ուղևորները նոր աշխարհում հիմնեցին Նոր Պլիմուտ քաղաքը, որը սկիզբ դրեց Նոր Անգլիայի ստեղծմանը: Այստեղ իշխող դիրք էին գրավում անգլոսաքսոնական ծագում ունեցող վերաբնակիչները, որոնք առավելապես բողոքական արմատական ուղղությունների հետևորդներ՝ «պուրտան» հավաքական անվամբ: Նոր Անգլիայի վերելքը թևակոխեց իր բուռն փուլը, երբ հիմնվեց Մասաչուսեթսի գաղութը, որը դարձավ ԱՄՆ-ի հոգևոր-մշակութային և գիտական (Հարվարդի համալսարանն այստեղ հիմնվեց) գլխավոր կենտրոնը: Գաղութը կազմավորվեց վերաբնակեցման քաղաքականությամբ ակտիվորեն զբաղվող անգլիացի հայտնի փիլիսոփա և քաղաքական

գործիչ **Ֆրենսիս Բեկոնի** մշակած սկզբունքներով: Նոր անգլիական հասարակության կառուցվածքը հիշեցնում էր Բեկոնի «Նոր Ատլանտիդա» ուտոպիական վեպում նկարագրված Բենասալենը:

Պուրիտաններն իրենց հետ նոր աշխարհ բերեցին **հասարակական կայնքի կոնգրեգացիոնալիստական կառուցվածքի սկզբունքները, որոնք վերաճեցին հանրապետական և դեմոկրատական սկզբունքների**: Նրանք հավատում էին, որ իրենք առաջապահ ջոկատն էին Աստծո և սատանայի միջև մղվող պայքարում: Այս թեզը զարգացրեց Նոր Պլիմուտի նահանգապետ Ուիլյամ Բրեդֆորդը:

Հետագայում, երբ Ամերիկա գաղթեցին հին աշխարհի տարբեր վայրերի բնակիչներ, պուրիտանները՝ օգտվելով իրենց իշխող դիրքից, ոչ թե պարտադրում էին իրենց կրոնական պատկերացումները, այլ՝ որդեգրելով ճկուն քաղաքականություն, ջանում էին տարածել տարաբնույթ քրիստոնեական ուղղությունները: Նրանք առաջ քաշեցին ընդհանուր քրիստոնեական հավատքի տեսությունը: Այդ ընդհանրությունն առաջին հերթին ի հայտ եկավ բողոքականության մեջ: **Բողոքական ընդհանուր կրոնը կոչվեց «Ավետարանական»:**

Ադվենտիզմ

Ադվենտիզմը (լատիներեն adventus - գալուստ բառից) պատկանում է ուշ բողոքական ուղղություններին: Ուսմունքի առանձնահատկությունն է հավատն առ **Հիսուս Քրիստոսի մոտալուտ երկրորդ գալուստը և աշխարհի վախճանի ճշգրիտ տարթիվ մշելը**: Ինչպես և ուշբողոքական կազմավորումների մեծամասնության, այնպես էլ ադվենտիզմի ակունքներից մեկը XVIII դ. ծագած **ռիվայվեիզմի** (անգլերեն revival – վերածնունդ, զարթոնք բառից) **կրոնափիլիսոփայական շարժումն** է, որը հոգևոր նորոգման ու ճշմարիտ առաքելական եկեղեցուն վերադառնալու կոչ էր անում՝ կապելով այն Երկրի վրա Քրիստոսի հազարամյա թագավորության հաստատման հետ: Հիմնվել է Մկրտչական (բապտիստական) եկեղեցու անդամ Ուիլյամ Միլերի (1772-1849թթ.) կողմից: Նա կիսագրագետ ամերիկացի էր, որը 1818թ. «կատարեց» աշխարհի վախճանի առաջին հաշվարկը և գտավ, որ այն հասնելու է 1843 թվականին: 1831թ. ակտիվորեն քարոզում է այդ մասին: Երբ երկրորդ գալուստը, իհարկե, տեղի չունեցավ, սահմանեց նոր տարեթիվ՝ 1844թ.: Այդ օրը կոչվեց **Մեծ հուսախաբության օր**: Այս հանգամանքը բաժանում մտքրեց նրանց մեջ, թեև կառուցվածքային ամբողջականություն ի սկզբանե չունեին: 1945թ. Նյու-Յորքի նահանգի Օլբանի քաղաքում ստեղծվում է Հազարամյա գալստյան ընկերությունը: Նույն տարում այստեղ մշակվում է ադվենտիզմի ուսմունքը: Բապտիստներից Ադվենտիզմը պահպանեց հասուն մարդկանց ջրով մկրտությունը՝ ընկղմումով և ոտքերի լվացումով: Ուսմունքի հիմնահարցերի շուրջ վեճերի հետևանքով Ադվենտիզմը բաժանվեց մի քանի հոսանքների, որոնցից ամենախոշորը **Յոթերորդ օրվա քրիստոնյա ադվենտիստների եկեղեցին (ՅՕՔԱԵ)** է: Դրանց մեջ շաբաթը պահողները հասնում են մի քանի տասնյակի (ադվենտիստ-բարեփոխականներ, Աստծո եկեղեցի և այլն): Գոյություն ունեն նաև կիրակին պահող ադվենտիստներ, ինչպես օրինակ՝ Ադվենտիստական քրիստոնեական եկեղեցին կամ

Ամերիկայի ադվենտիստական քրիստոնեական գերագույն համաժողովը: Միլլերի ուղղափառ հետևորդները գործնականում անհետացան արդեն XXդ. սկզբին:

Միլլերի կողմնակիցներ Յ. Էդսոնը և Յ. Ուայթը սկսեցին զանազան տեսիլների պատճառաբանությամբ հիմնավորել ու արդարացնել կատարված սխալը: Քարոզում էին աշխարհի վախճանն ու միայն 144 000-ի փրկությունը: Յ. Ուայթը և Ժ. Բեյթսը տվեցին իրենց՝ շաբաթվա մասին վարդապետությունը, ըստ որի սատանայի մեծ հաղթանակներից մեկն այն էր, որ Յոննի եկեղեցին շաբաթ օրը փոխարինեց կիրակիով: Սկիզբ առավ **շաբաթապահությունը**: Ուսմունքի կարևոր մաս է նաև **սանիտարական բարեփոխումը**՝ մաքրության մասին հուղայական օրենքները պահելը:

Ըստ Ուայթի Ս. Յոզու պարզաներից մեկը՝ մարգարեական ոգին բնորոշ պետք է լինի մնացորդ եկեղեցուն: Ի տարբերություն այլ քրիստոնեական ուղղությունների, ադվենտիստները չեն ընդունում հոգու անմահությունը, դրախտն ու դժոխքը: Նրանք համարում են, որ հոգին՝ մարմնի հետ մեկտեղ մահկանացու է, բայց Աստված կարող է հարություն տալ թե՛ հոգուն և թե՛ մարմնին: Ըստ նրանց, բարեպաշտները Քրիստոսի թագավորության մեջ հազար տարի կունենան հավիտենական կյանք, իսկ հետո ոտք կդնեն նորացված Երկիր:

Ադվենտիստներն ընդունում են երկու խորհուրդ՝ մկրտությունը և Վերջին ընթրիքը (վերջինիս մաս է կազմում հաղորդությունը, որը կատարվում է հացի և խաղողի հյութի գործածությամբ):

Յոթերորդ օրվա քրիստոնյա ադվենտիստների եկեղեցու բարձրագույն ղեկավար մարմինը գերագույն կոնֆերանսն է (Համաշխարհային միությունը)՝ Վաշինգտոնում (ԱՄՆ) գտնվող իր կենտրոնական գրասենյակով: Այն ունի 11 բաժանմունքներ իրենց գործունեությամբ ընդգրկում են խոշոր աշխարհագրական տարածքներ և երկրների խմբավորումներ: Դրանց թվում է Եվրասիական բաժանմունքը, որը միավորում է ԱՊՀ երկրների **ՅՕՔԱԵ** բոլոր միավորումները (նախագահն է Թեդ Ուիլսոնը):

Աշխարհում կան մոտ 5 միլիոն ադվենտիստներ, իսկ համակիրներով հանդերձ՝ մինչև 10 մլն.:

1926թ. Գերմանիայի Գոթե քաղաքում տեղի ունեցած համագումարում՝ բաժանման հետևանքով ադվենտիստներից առանձնացավ և ձևավորվեց Ադվենտիստ-բարեփոխականների կազմակերպությունը: Սրանց ուսմունքը նույնն է, սակայն բարեփոխականները համարում են, որ իրենց նախկին եղբայրները հրաժարվել են աստվածաշնչյան չորրորդ և վեցերորդ պատվիրանների կատարումից: Նրանք իրենց հետևորդներից պահանջում են դրանց տառացի և անխոս կատարումը. շաբաթ օրերը չաշխատել ոչ մի դեպքում, հրաժարվել բանակում ծառայելուց և ենթարկվել միայն այն օրենքներին, որոնք չեն խաթարում հոգևոր կյանքի սկզբունքներին: Բարեփոխականները անհաշտ դիրք ունեն քաղաքացիական իշխանության նկատմամբ, հրաժարվում են գրանցել իրենց միավորումները: Վարում են ինքնամփոփ կյանք: Նրանց համայնքները սակավամարդ են:

ՀՀ-ում գրանցված է «Հայաստանի շաբաթապահ-գալստական (ադվենտիստական)» հարանվանությունը (տես «Այլ դավանանքներ» գլխի «Հայաստանի կրոնական կազմակերպությունները» բաժնի «Ադվենտիստական կազմակերպություն» նյութը):

Հոգեգալստականներ կամ հիսնականներ

Հիսնականները կամ՝ Հոգեգալստական կամ Պենտեկոստի (այստիղեսյատնիկների) շարժումը քրիստոնեության ուշբողոքական հոսանքներից է, որը ծնունդ առավ 1900թ. դեկտեմբերի 31-ին ամերիկյան մայրցամաքում: Նրանց գաղափարական ակունքները գալիս են իրենց նախորդներից՝ XVIIIդ. ԱՄՆ-ի, Անգլիայի և այլ երկրների բողոքական եկեղեցիների միջավայրում ի հայտ եկած քիվայվելիզմի կրոնափիլիսոփայական շարժումից (սրանց անմիջական հետնորդներից է ադվենտիզմը) և այդ շրջանակներում զարգացած **սրբության շարժումից**:

Սկզբում հիսնականները զանազան քրիստոնեական բողոքական եկեղեցիների՝ նախ և առաջ բապտիստների ու մեթոդիստների, հոգևոր վերնախավն էին կազմում: Հետագայում, ավելի շատ հետևորդներ հավաքելով, նրանք դուրս եկան այս եկեղեցիներից և տարբեր անվանումների տակ (Աստծո եկեղեցի, Աստծո ասամբլեա, ճշմարիտ Ավետարանի եկեղեցի ևն) ստեղծեցին ինքնուրույն համայնքներ:

Այս շարժումների կարգախոսն էր **հոգևոր զարթոնքը կամ առաջին դարերի ճշմարիտ առաքելական եկեղեցուն վերադառնալը**: Նրանք հակադրվում էին մարդու ճակատագրի բացարձակ կանխորոշվածության կալվինական ուսմունքի խստապաշտությանը, հայտարարելով, որ փրկությունը ոչ թե կանխորոշված է, այլ վաստակվում է առ Քրիստոս անհատական հավատքով և բարեպաշտ կյանքով: Հենց սրբության շարժման մեջ բյուրեղացան ուսմունքի այն դրույթները, որոնք հետագայում ձևավորեցին հիսնականությունը: Համաձայն XIX-XXդդ. Ջ. Ուեսլիի հիմնած այս ուսմունքի, որը կոչվեց **Սրբության շարժում**, մեղավոր մարդը իր հոգևոր էվոլյուցիայի ընթացքում անցնում է մի քանի «աստիճաններ»:^{1/} դարձ, երբ մարդը հավատում է Աստծուն, որի արդյունքում տեղի է ունենում անհատական մեղքից ազատագրումը, ^{2/} ի վերուստ ծնունդը կամ սրբագործումը, երբ մարդը ակնթարթորեն հրաշալի կերպով վերածնվում է, որի արդյունքում ազատագրվում է նաև նախնական մեղքից՝ հասնելով սրբության վիճակին: Հիսնականները՝ **սրբության շարժումից** ընդունելով այս երկու աստիճանների մասին ուսմունքը, դրան ավելացրեցին նաև «**Երրորդ օրհնության**»՝ Սուրբ Հոգով մկրտվելու ուսմունքը: Այս դրույթի համար հիմք հանդիսացավ Քրիստոսի համբարձման 50-րդ օրը (այստեղից նրանց անունը՝ հիսնականներ) Նրա աշակերտների վրա Ս. Հոգու իջնելու (այստեղից նրանց մյուս անունը՝ հոգեգալստականներ) մասին ավետարանական իրողությունը: Նրանք հավատում են, թե հավատացյալը Ս. Հոգով մկրտվելու միջոցով կարող է Ս. Հոգի ստանալ:

Սուրբ Հոգով մկրտվելը հավատացյալի հատուկ էքստատիկ (հուզավառության) ապրում է, որի արտաքին դրսևորումն է գլոսոլալիան (**glossa-գլոսոլալիա՝** անհասկանալի բառ), որը հասկացվում է որպես «այլ» լեզվով խոսել: Նրանք խորհրդաբանորեն (միստիկորեն) հաղորդակցվում են Աստծո հետ, և դրանից, ինչպես իրենք են համարում, առանձնահատուկ ընդունակություններ են ձեռք բերում՝ հիվանդներին բժշկելու, քարոզելու ևն, մասնավորապես՝ լեզուներով խոսելու: Պահքից ու աղոթքից հետո, ինչպես իրենք են ասում, մարդն սկսում է անհասկանալի լեզվով խոսել, որն էլ նշան է այն բանի, որ տվյալ մարդը ստացել է Սուրբ Հոգու շնորհը: Սրա պատմական նախատիպը երկրորդ դարի մոնտանական աղանդն է, որոնց մասին գրելով Եվսեբիոս Կեսարացին այսպես է նկարագրում նրանց. «Շամբշաբար (մոլագար) անճախ (անպատշաճ) և օտարաձայն բարբառէին...»:

10. ավարտին՝ հեթանոսությունը լիովին հաղթահարելուն զուգընթաց, **գլոսուլալիան** իրեն բուլղորովին սպառեց քրիստոնեական համայնքներում, և միայն XIXդ. երկրորդ կեսերին այն կրկին ի հայտ եկավ քրիստոնեական միջավայրում՝ հոգևորության ու ներշնչանքի պակասություն զգացողների մեջ: Միասնական քրիստոնեական ավանդությունից դուրս մնալով, նրանք (նաև գրեթե ողջ բողոքականությունը) վերադարձան կռապաշտության տարրերին և հոգեկան էքստազն ու զանգվածային հիստերիան ընդունեցին որպես իրենց մեջ Ս. Յոզու ներկայության նշան¹¹:

Հիսնականներն ընդունում են Հնավանդ եկեղեցու յոթ¹² խորհուրդներից միայն երկուսը. ջրով մկրտությունը և Տիրոջ վերջին ընթրիքը (հաղորդությունը), ինչպես նաև քահանայագործությունը, պսակը, երեխաների օրհնության աղոթքը, հիվանդների համար արվող աղոթքը և ձեռնադրությունը:

Այս շարժմամբ հիմք դրվեց մակերեսային կրոնական ուղղությունների, որոնք հենվում էին անհատների անձնական փորձառությունների վրա:

Պաշտամունքի այս ձևն իր արմատներն ունի հեթանոսական կրոններում, որը վերածնվեց XVIII-XIXդդ. ի հայտ եկած կրոնական շարժումներում: Այսպես, օրինակ՝ Անգլիայում **Է. Իրվինգի** (1792-1834թթ.) հետևորդները քարոզում էին, որ առաքելական ժամանակների շնորհները (բժշկություն, լեզվախոսություն, մարգարեություն և այլն) պետք է փոխանցվեն և ի հայտ գան իրենց ժամանակներում: **Շոտլանդացի Ֆոքսը** պնդում էր, որ անմիջապես «լուսավորվելով» Ս. Յոզուց, ամեն մարդ իմանում է ամեն անհրաժեշտ բան, և կարիք չունի ո՛չ եկեղեցու, ո՛չ էլ՝ Ս. Գրքի (ինքնատիպ աթեիզմ): Անգլիացի **քվակերները** (անգլերեն **quaker - դոդ, դողացնել, ցնցվել**) հավաքվելով միասին, սպասում էին, որ իրենցից մեկը կհզուավառվի և պայծառություն կստանա ու կսկսի մարգարեանալ: Համաձայն **Ջ. Վեսլի** հավատացյալը՝ արդարացմանը զուգահեռ, պետք է նաև սրբանա իր կյանքի ընթացքում: Սրա ճյուղավորումներից է **Հոգեգալստական շարժումը**, որը իրվինգիստներից որդեգրեց պաշտամունքի էքստատիկ արարողակարգը, ինչը հոգեբանական զանազան երևույթներ է առաջ բերում: Ս. Յոզու պարզներից առանձնացնելով լեզվախոսությունը՝ հոգեգալստականներն այն պարտադիր համարեցին յուրաքանչյուր հավատացյալի համար՝ որպես Ս. Յոզով մկրտված լինելը հաստատող նշան: Հոգեգալստականների շարժումը թափանցեց իր երբեմնի բնօրրան՝ բողոքականության մեջ, ավելին՝ անգամ 60-ականներին թափանցեց Կաթոլիկ որոշ շրջանակներ, որոնք խրախուսեցին այդ շարժումը: **Այս իսկ պատճառով բողոքականները հոգեգալստականներին չեն դիտում որպես աղանդ, թեև այն իրենում կրոնական մի նոր տեսակի շարժման սաղմեր է պարունակում:**

Հիսնականներին հատուկ են երկու հակադիր միտումներ. առավել մեծ միավումների մեջ միասնանալը և անկախ համայնքներն ու ուղղությունները պահպանելը: Արդյունքում առկա են համաշխարհային մասշտաբով գործող այնպիսի խոշոր միավորումներ, ինչպիսիք են «Աստծո եկեղեցին» (հիմն. 1903թ.), «Աստծո ասամբլեան» (1914թ.), «Ճշմարիտ Ավետարանի միջազգային եկեղեցին» և այլն, և բազմաթիվ մանր համայնքներ, որոնք տարբերվում են իրենց ուսմունքներով կամ ազգային բազմազանությամբ:

Ամերիկյան խոշորագույն հիսնական եկեղեցիներից է Աստծո ասամբլեան, որի կենտրոնակայնը գտնվում է Միսուրիի նահանգի Սփրինգֆիլդ քաղաքում: Հիմնվել է 1914թ.: Ի թիվս հիսնական հավատալիքների, ընդունում են նաև հավատքով բժշկվելու, Քրիստոսի

¹¹ Նկատենք, որ գլոսուլալիա ասածն առկա էր նաև հեթանոսական կրոններում և հիսնական գլոսուլալիան հենց վերջինիս դրսևորումն է, քանի որ վերջիններս պնդում են, որ փրկությունը հենց Ս. Յոզու ներգործությամբ է լինում: Եթե այդպես է, ապա ի՞նչ կարիք կար, որ Քրիստոսն ինքնագոհաբերվեր, եթե Ս. Յոզով կարելի է փրկվել նաև ասեմք հին հույների կրոնի կամ շամանիզմի միջոցով: Իսկ Պենտեկոստեի օրը առաքյալների այլ լեզուներով խոսելուն դառնալով (Գործք. 2:4-11), պետք է ասել, որ առաքյալները՝ այլ լեզուներ նախապես չիմանալով, Ավետարանն այնպես էին քարոզում, որ տարբեր ժողովուրդների զավակները հասկանում էին իրենց, և ոչ թե իրենց հետ միևնույն լեզվով խոսացող մարդկանց դիմել են անհասկանալի անհողաբաշխ ձայներ քրթմնջալով: Ս. Յոզին՝ ճշմարտության Յոզին, փոխհասկացողության շնորհ է պարգևում, իսկ անհողաբաշխ ու անհասկանալի ձայների բացակայությունը ոչ թե շնորհ է, այլ Աստծո պատիժ: Բացի այս, հարց է ծագում. այդ ինչպե՞ս եղավ, որ «լեզուներով խոսելու» պարզև ստացած հիսնական կամ խարիզմատիկ օտարերկրյա քարոզիչները մեր երկրում իրենց հավատակիցների հետ հաղորդակցվում են թարգմանիչների, այլ ոչ թե «ի վերուստ իրենց տրված» լեզուներով:

¹² Եկեղեցու յոթը խորհուրդներն են. մկրտությունը, դրոշմը, ապաշխարհությունը, հաղորդությունը, ձեռնադրությունը կամ «կարգ քահանայության»-ը, պսակը կամ «կարգ անուսմության»-ը, կարգ հիվանդացը, որոնք ունեն խորհրդաբանական նշանակություն:

երկրորդ գալստյան ու մեռածների կրկնակի հարության և այլ դրույթներ: Միսիոներական գործունեությունն է ծավալում աշխարհի տասնյակ երկրներում: Իր համայնքներն ունի 98 երկրներում:

Հիսնականները **հայտնի են նաև «Ավետարանի հավատքի քրիստոնյաներ» անվամբ** (մասնավորապես ՀՀ-ում նրանք գրանցվել են այդ անվամբ), որոնք ծագել են «Աստծո ասամբլեա» եկեղեցուց:

Աշխարհում կա մոտավորապես 50 միլիոն հիսնական-հոգեգալստական:

(Տես «Այլ դավանանքներ» գլխի «Հայաստանի կրոնական կազմակերպությունները» բաժնի « Հոգեգալստական կազմակերպությունները» նյութը):

Ավետարանական հարանվանություն

Սա լյութերական եկեղեցու և միսիոներությունն ու **ավետարանչությունը** որպես **գլխավոր խնդիրներ համարող** տարբեր բողոքական հարանվանությունների միավորումների ընդհանուր անվանումն է: Դրանցից են օրինակ՝ Գերմանիայի Ավետարանական եկեղեցին, Չեխական եղբայրների Ավետարանական եկեղեցին, Շվեդիայի Ավետարանական-Լյութերական եկեղեցին, Ավետարանական Ազգային Ընկերությունը, Լատվիայի Ավետարանական-Լյութերական եկեղեցին, Էստոնիայի Ավետարանական-Լյութերական եկեղեցին, Հունգարիայի Ավետարանական-բարեփոխական եկեղեցին:

Ավետարանական հարանվանությունը Լյութերական եկեղեցու և միսիոներությունն ու **ավետարանչությունը** որպես **գլխավոր խնդիրներ համարող** տարբեր բողոքական հարանվանությունների միավորումների ընդհանուր անվանումն է: Դրանցից են օրինակ՝ Գերմանիայի Ավետարանական եկեղեցին, Չեխական եղբայրների Ավետարանական եկեղեցին, Շվեդիայի Ավետարանական-Լյութերական եկեղեցին, Ավետարանական Ազգային Ընկերությունը, Լատվիայի Ավետարանական-Լյութերական եկեղեցին, Էստոնիայի Ավետարանական-Լյութերական եկեղեցին, Հունգարիայի Ավետարանական-բարեփոխական եկեղեցին, Համաշխարհային Լյութերական դաշինք (ՀԼԴ), Դանիական ժողովրդական եկեղեցի (ԴԺԿ):

Նկատենք նաև, որ կալվինականության ժամանակակից հետևորդներ բարեփոխականները, երիցականները, ժողովականները (կոնգրեգացիոնալիստներ) կորցնելով իրենց երբեմնի արմատականությունը (մասնավորապես բացարձակ կանխորոշվածության սկզբունքը¹³), շատ բաներում մոտեցել են լյութերական և ավետարանական ուսմունքներին:

Երբ Ամերիկա գաղթեցին հին աշխարհի տարբեր վայրերի բնակիչներ, պուրիտանները՝ օգտվելով իրենց իշխող դիրքից, ոչ թե պարտադրում էին իրենց կրոնական պատկերացումները, այլ՝ որդեգրելով ճկուն քաղաքականություն, ջանում էին տարածել տարաբնույթ քրիստոնեական ուղղությունները: Նրանք առաջ քաշեցին **ընդհանուր քրիստոնեական հավատքի տեսությունը**: Այդ ընդհանրությունն առաջին հերթին ի հայտ եկավ բողոքականության մեջ:

¹³ Նիժաաի-իեե Ծաեթեյ, Նաիաի ան անոթե, Անոթաոթաաիի-ծածեիաիւնա իմիւթաիւնա Թիննե, Ի նեա, 1996, Թիննեթեայ Աեաաի եյ աիոթաոթաաիիե նեթաիւն իծե իծաթեաիւնա Թիննեթեի Ծաթածաթե, Էիլիեծա ի նայցի ն ծաեթեիւնա ի ծաթածաթեաիւնա Ի նեա:

Բողոքական ընդհանուր կրոնը սկսեց կոչվել «Ավետարանական»:

(Տես «Այլ դավանանքներ» գլխի «Հայաստանի կրոնական կազմակերպությունները» բաժնի «Ավետարանական կազմակերպություններ» նյութը)

Կոնգրեգացիոնալիստական եկեղեցի (ժողովականներ)

Նրա գործունեությունը, համաձայն բողոքական ավանդության, հաճախ պայմանավորվում է հավատացյալների ցանկություններով ու շահերով (52):

Նրանց թիվը ԱՄՆ-ում 1910-1975թթ. անկում 14 ասրեց 456 000-ից մինչև 192 140:

¹⁴ Давидович И. А., Б. В. Ашот, «Современное состояние протестантизма в Армении», 1976, стр 94.